ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
MINISTRY OF ENVIRONMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
ECOPATROL SERVICE
GENERAL SECRETARY
МИНИСТЕРСТВО ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЭКОПАТРУЛЬНАЯ СЛУЖБА
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia

0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта: **lusine.aleksanyan@ecopatrolservice.am**
Կայք՝/web:/сайт: **www.ecopatrolservice.am**
Հեռ.՝/tel:/тел: +374 10 65 09 35

№2-08/446-24

«16» «դեկտեմբերի» 2024թ.

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ տնօրեն
Կառլոս Բաղրամյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Բաղրամյան

Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024 թվականի նոյեմբերի 21-ին կնքվել է «ՇՄՆԷՊԾ-ԳՀԱՊՁԲ-24/04» ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն ինչի Վաճառողի կողմից պետք է իրականացվեր 50 հատ «Ձեռնաշթա» գնման առարկայի մատակարարումը:

Համաձայն Պայմանագրի 1.1 կետի՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի Հավելված №1-ով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայն Պայմանագրի 2.4.1 կետի՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի Հավելված №2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանված պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 21 օրյա ժամկետում՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 12-ը ներառյալ:

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն 2024 թվականի դեկտեմբերի 5-ի գրությամբ հրաժարվել է շրջակա միջավայրի նախարարությանէկոպարեկային ծառայությանը մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները և խնդրել է միակողմանի լուծել պայմանագիրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները և հիմք ընդունելով Պայմանագրի 8.11 կետը Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Հայաստանի Հանրապետության

կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի կատարման ապահովման գումարը, ինչը կազմում է 160000 (հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, անհրաժեշտ է վճարել ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը՝ 240000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ վճարել ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000698 հաշվեհամարին և շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությանը ծանուցել վճարման անդորրագրերի պատճենները կամ դրանք տրամադրել s.ghazaryan@ecopatrolservice.am էլեկտրոնային փոստի հասցեով:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

ա) լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

բ) մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Հարգանքով՝ Լուսինե Ալեքսանյան

Գնումների բաժնի պետ
Սուսաննա Ղազարյան
+374 10 65 01 54